





Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԱՐՀԻԱՊԱՏԻԻ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ

ԻԳՆԱՏԻՈՍԻ Վ.Ի ԿԻՒՐԵՂԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏՐԱՅԱՆՈՒՊՈԼՍԻ

ԵՒ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՐԲԱՅԻ

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՑ

Ծանրաթախիծ ու վշտացեալ սրտով կը գուժենք Միա-
բանութեանս անդուգական Հօր և առաքելաշնորհ Դիտապետին
մահը, որ տեղի ունեցաւ ի Ս. Զենոն Դեկտ.ի 1-ին, յետ
կարճատե հիւանդութեան մը, շրջապատուած իր ձեռնասուն
որդիքներէն, կազդուրուած Ս. Խորհուրդներով և մասնաւոր
օրհնութեամբ Ս. Քահանայապետին:

Խմբագրութիւնս « Բազմավեպ » ի յաջորդ. թուոյն հետ
առանձին Յաւելուածով մը պիտի ներկայացնէ ջերմ համա-
կրանաց և յարգանքի այն ամէն հանդիսաւոր արտայայտու-
թիւնները, որ եղան հոգեւոյս Հայրապետիս Յուզարկաւորու-
թեան առթիւ ի Ս. Զենոն և ի վենետիկ, անխտիր ամէն
դասակարգէ, պաշտօնական անձնաւորութիւններէ և Միաբա-
նութեանս համակիր սերտ բարեկամներէ: